ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

<<12>> հուլիսի 2023 թ. քաղաք Մարալիկ

2023 թվականի հուլիսի 12-ին ժամը 15^{00}-ին ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքում, Անիի համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում /հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց թիվ 1/ տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու արտահերթ նիստը:

Համայնքի ավագանու նիստը վարում էր Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանը:

Նիստն արձանագրում էր Անիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Հարություն Համբարյանը:

Զեկուցողը նշեց, որ հրատապ անհրաժեշտություն է առաջացել համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ համայնքի ավագանու արտահերթ նիստ հրավիրելու համար, որը հիմնականում պայմանավորված է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-ծրագիր 3-ի շրջանակներում Մ-1, Երևան-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի Թալին-Լանջիկ հատվածի մուտքերի կառուցման համար հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի լրացում 1-ի շրջանակներում հանրության գերակա շահ ճանաչված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը Հայաստանի Հանրապետությանը օտարելու, ինչպես նաև ընթացիկ ևս 4 հարցերի վերաբերյալ որոշումներ ընդունելու անհրաժեշտությամբ:

Նիստին մասնակցում էին՝ <<ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> կուսակցության Անի համայնքի ավագանու անդամներ՝

1. ԱՐՄԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ,
2. ԷԴԳԱՐ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԸ,
3. ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐՇԱԿՅԱՆԸ,
4. ԷԴԻԿ ՈՒՌՈՒՏՅԱՆԸ
5. ԱՐՏԱԿ ՇԱԲՈՅԱՆԸ,
6. ՀԱՍՄԻԿ ՋԱՏԻԿՅԱՆԸ,
7. ԳԱԳԻԿ ԹԱԹԵՎՈՍՅԱՆԸ,
8. ԳՈՌ ԱՂԱԲԵԿՅԱՆԸ

9. ԺԻՐԱՅԻ ԱԼԵՔՅԱՆԸ

10. ՆԱԻՐԱ ՍԱՐՈՅԱՆԸ,

11. ՄԵՐՐԻ ԵՆՈՔՅԱՆԸ:

Համայնքի ավագանու նիստին անհարգելի բացակայում էին՝

<<ԱԶԳ-ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ Անի համայնքի ավագանու անդամներ՝

1. ԱՐՏԱԿ ՍԱՎԵԼԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ,
2. ԱՎԵՏԻՔ ԱՐՏՈՒՇԻ ՆԱԶԱՐՅԱՆԸ,
3. ԿԱՏՅԱ ՋԻՎԱՆԻ ՆԱԽՇՔԱՐՅԱՆԸ,
4. ՆԱՐԵԿ ԳԵՎՈՐԳԻ ՆԻԿՈՅԱՆԸ,
5. ԶԱՎԵՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԸ,
6. ՆԱՐԻՆԵ ՍԵԴՐԱԿԻ ՄԿՈՅԱՆԸ,
7. ԱՆՆԱ ՀԱԿՈԲԻ ԱՎԴԱԼՅԱՆԸ:

<<ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ Անի համայնքի ավագանու անդամներ՝

1. ԱԳՈՒՆ ՎԱՐԴԱՆԻ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԸ,
2. ԳԱՅԱՆԵ ԳԱՌՆԻԿԻ ԱՎԵՅԱՆԸ:

<<ԻՄ ՀԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ>> ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ՝ Անի համայնքի ավագանու անդամ՝

1. ԱՐՄԵՆԱԿ ՎԱՍՊՈՒՐԱԿԻ ՆԱԶԱՐՅԱՆԸ:

Համայնքի ավագանու նիստին ներկա են Անիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ, համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներ, համայնքային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, համայնքի ներկայացուցիչներ:

Տեղեկացվեց, որ Անի համայնքի ավագանու 21 անդամներից համայնքի ավագանու նիստին մանակցում են 11-ը, այսինքն քվորումն ապահովված է:

Անի համայնքի ավագանու արտահերթ նիստը հայտարարվեց բացված:

Զեկուցողը նշեց, որ ավագանու անդամներին սահմանված կարգով և ժամկետներում տրամադրվել են համայնքի ավագանու այսօրվա արտահերթ նիստի օրակարգի, օրակարգային հարցերի ավագանու որոշումների նախագծերը:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց Անի համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգի նախագիծը և առաջարկեց հրապարակված օրակարգի նախագծում ընդգրկել ևս 2 հարցեր, որոնց ընդունումը կապված է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետների ապահովման հետ: Դրանք են՝ օրակարգի 6-րդ և 7-րդ հարցերը:

1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյան/

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ-ԾՐԱԳԻՐ 3-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ Մ-1, ԵՐԵՎԱՆ-ԳՅՈՒՄՐԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԹԱԼԻՆ-ԼԱՆՋԻԿ ՀԱՏՎԱԾԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄ 1-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյան/

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿՈՒՏԱԿՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՎԱԶԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ԳԻՆԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյան/

4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0041- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.000404 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏՅՈՄ ԱՐՏԱԿԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԻԹՀԱՆՔՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-072-0009-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.39985 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԿՈՂՄԻՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Առաջարկություն ստացվեց հաստատել ավագանու նիստի օրակարգը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով հաստատվեց համայնքի ավագանու նիստի օրակարգը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի, 65-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 12-ին ժամը 15^{00}-ին Անիի համայնքապետարանի վարչական շենքի նիստերի դահլիճում կայանալիք ավագանու արտահերթ նիստի հետևյալ օրակարգը՝

1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյան/

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ-ԾՐԱԳԻՐ 3-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ Մ-1, ԵՐԵՎԱՆ-ԳՅՈՒՄՐԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԹԱԼԻՆ-ԼԱՆՋԻԿ ՀԱՏՎԱԾԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄ 1-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյան/

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿՈՒՏԱԿՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՎԱԶԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ԳԻՆԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյան/

4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0041- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.000404 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏՅՈՄ ԱՐՏԱԿԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԻԹՀԱՆՔՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-072-0009-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.39985 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

<u>Օրակարգ-2:</u>

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ-ԾՐԱԳԻՐ 3-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ Մ-1, ԵՐԵՎԱՆ-ԳՅՈՒՄՐԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԹԱԼԻՆ-ԼԱՆՋԻԿ ՀԱՏՎԱԾԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄ 1-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Զեկուցողը նշեց, որ որոշման ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-ծրագիր 3-ի շրջանակներում Մ-1, Երևան-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի Թալին-Լանջիկ հատվածի մուտքերի կառուցման համար հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի լրացում 1-ի շրջանակներում հանրության գերակա շահ ճանաչված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող չորս կտոր հողամասերը, օրենքով սահմանված կարգով հաշվարկված փոխհատուցման գնով, անհրաժեշտ է օտարել Հայաստանի Հանրապետությանը:

Առաջարկություն ստացվեց ընդունել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ-ԾՐԱԳԻՐ 3-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ Մ-1, ԵՐԵՎԱՆ-ԳՅՈՒՄՐԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԹԱԼԻՆ-ԼԱՆՋԻԿ ՀԱՏՎԱԾԻ ՄՈՒՏՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄ 1-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, <<Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ 1274-Ն որոշմամբ հաստատված <<Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի-ծրագիր 2-ի հողի օտարման և տարաբնակեցման շրջանակը>> և N 1 և N 2 հավելվածների պահանջները, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Տալ համաձայնություն, Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-ծրագիր 3-ի շրջանակներում Մ-1, Երևան-Գյումրի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի Թալին-Լանջիկ հատվածի մուտքերի կառուցման համար հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի լրացում 1-ի շրջանակներում հանրության գերակա շահ ճանաչված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը, օրենքով սահմանված կարգով հաշվարկված փոխհատուցման գնով, օտարել Հայաստանի Հանրապետությանը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

Օրակարգ-3:

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿՈՒՏԱԿՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՎԱԶԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ԳԻՆԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան)

Զեկուցողը տեղեկացրեց, որ որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ

մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով:

Հաշվի է առնվել այն հանգամանքը, որ 1970-ական թվականներին Ախուրյանի ջրամբարի շինարարության ժամանակ կապալառու կազմակերպությունների կողմից շինարարության կարիքների համար կուտակված շինարական ավազը չի օգտագործվել, այն տեղակայվել է Անի համայնքի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտ հողատեսքի հողատարածքում և հանդիսանում է տիրազուրկ գույք: Համայնքապետարանը կարևորելով համայնքի միջբնակավայրային և դաշտամիջյան ճանապարհների փոսային նորոգման կարիքների համար շինարարական ավազի օգտագործման անհրաժեշտությունը, ինչպես նաև ճանապարհաշինարարական կազմակերպությունների կողմից Անիի համայնքապետարան ներկայացված ավազի օգտագործման պահանջարկը և գյուղատնտեսական նշանակության արոտի տարածքի մաքրման և այն գյուղատնտեսական շրջանառության մեջ ներգրավելու անհրաժեշտությունը, համայնքի ավագանուն ներկայացվել է որոշման նախագիծ՝ կուտակված շինարարական ավազը համայնքի սեփականությունը ճանաչելու և այն ինչպես համայնքի կարիքների համար օգտագործելու, այնպես էլ պահանջարկի դեպքում այլ կազմակերպությունների վաճառելու վերաբերյալ: Տեղեկացնում եմ, որ տարածքում կատարվել են կուտակված ավազի գեոդեզիական ուսումնասիրություն և կատարվել են ծավալի չափագրում: Որոշման նախագծով մեկ խորանարդ մետր ավազի զանգվածի վաճառքի գին է սահմանվել՝ 500 ՀՀ դրամ:

Առաջարկություն ստացվեց ընդունել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿՈՒՏԱԿՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՎԱԶԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ԳԻՆԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 202-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով, որ 1970-ական թվականներին Ախուրյանի ջրամբարի շինարարության ժամանակ կապալառու կազմակերպությունների կողմից շինարարության կարիքների համար կուտակված շինարական ավազը չի օգտագործվել, այն տեղակայված է Անի համայնքի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտ հողատեսքի հողատարածքում և հանդիսանում է տիրազուրկ գույք, կարևորելով համայնքի միջբնակավայրային և դաշտամիջյան ճանապարհների փոսային նորոգման կարիքների համար շինարարական ավազի օգտագործման անհրաժեշտությունը, ճանապարհաշինարարական կազմակերպությունների կողմից Անիի համայնքապետարան ներկայացված ավազի օգտագործման պահանջարկը, ինչպես նաև գյուղատնտեսական նշանակության արոտի մաքրման և այն գյուղատնտեսական շրջանառության մեջ ներգրավելու անհրաժեշտությունը, հիմք ընդունելով կուտակված ավազի գեոդեզիական ուսումնասիրության և ծավալի չափագրական նյութերը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող 08-090-0110-0001 կադաստրային ծածկագրով 28.482 հեկտար արոտ հողատեսքի հողատարածքում կուտակված, տիրազուրկ համարվող, 22 000 /քսաներկու հազար/ խորանարդ մետր ծավալով շինարարական ավազը համարել համայնքի սեփականություն և այն տնօրինել որպես սեփական գույք:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված շինարարական ավազի կուտակումը օգտագործել Անի համայնքի միջբնակավայրային և դաշտամիջյան ճանապարհների փոսային նորոգման կարիքների համար, իսկ ճանապարհաշինարարական և այլ կազմակերպությունների պահանջարկի դեպքում՝ այն վաճառել ուղղակի կարգով՝ մեկ խորանարդ մետր զանգվածը՝ 500 /հինգ հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Սարբեկյանին Պատշաճ հաշվառում և հսկողություն իրականացնել շինարարական ավազի օգտագործման գործընթացի նկատմամբ և ավազի կուտակումը իրացնելուց հետո, վերականգնել գյուղատնտեսական նշանակության հողատարածքի արոտ հողատեսքը և այն ներգրավել գյուղատնտեսական շրջանառության մեջ:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

<u>Օրակարգ-4:</u>

4) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0041- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.000404 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏՅՈՄ ԱՐՏԱԿԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ Անիի համայնքապետարան է դիմել քաղաքացի Արտյոմ Արտակի Գևորգյանը, իրեն սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Ֆ. Ձերժինսկի փողոց, 16-րդ շենք, 3/1 բացվածք հասցեում գտնվող 08-003-0041-0009-003-050 կադաստրային ծածկագրով խանութի շենքի հարակից 08-003-0041- կադաստրային ծածկագրով 0.000404 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, խանութի արտաքին պատուհանը արդիականացնելու, աստիճանահարթակ և թեքահարթակ կառուցելու նպատակով, իրեն օտարելու խնդրանքով: Որոշման ընդունումը կարգավորվում է«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 12-ի N 286

որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 6-րդ կետի դրույթներով: Հարցի վերաբերյալ դրական եզրակացություն է տրամադրել <<Սեդրակ Մուրադյան>> անհատական ձեռնարկություն լիցենզավորված կազմակերպությունը:

Առաջարկություն ստացվեց ընդունել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0041- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԱՐԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.000404 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏՅՈՄ ԱՐՏԱԿԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 12-ի N 286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի» 6-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 1-3-րդ, 6-րդ, 7-րդ ենթակետերը, հաշվի առնելով <<Սեդրակ Մուրադյան>> անհատական ձեռնարկության 04.04.2023 թվականի դրական եզրակացությունը՝ խանութային շենքի բացվածքի ցուցափեղքի կոնստուկտիվ ձևափոխության վերաբերյալ, նկատի ունենալով, որ քաղաքացի Արտյոմ Արտակի Դավթյանին /հետագայում՝ քաղաքացի/ սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Ֆ. Ձերժինսկի փողոց, 16-րդ շենք, 3/1 բացվածք հասցեում գտնվող 08-003-0041-0009-003-050 կադաստրային ծածկագրով խանութի շենքի հարակից 08-003-0041- կադաստրային ծածկագրով 0.000404 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /հասցե՝ մարզ Շիրակ, քաղաք Մարալիկ, Ֆ. Ձերժինսկի փողոց, 16-րդ շենք թիվ 3/7 հողամաս/ հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել հրապարակային սակարկությունների միջոցով, հաշվի առնելով քաղաքացու 2023 թվականի ապրիլի 3-ի դիմումը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաշվի առնելով, որ քաղաքացի Արտյոմ Արտակի Դավթյանին /հետագայում՝ քաղաքացի/ սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Ֆ. Ձերժինսկի փողոց, 16-րդ շենք, 3/1 բացվածք հասցեում գտնվող 08-003-0041-0009-003-050 կադաստրային ծածկագրով խանութի շենքի հարակից

08-003-0041- կադաստրային ծածկագրով 0.000404 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /հասցե՝ մարզ Շիրակ, քաղաք Մարալիկ, Ֆ. Ձերժինսկի փողոց, 16-րդ շենք թիվ 3/7 հողամաս/ , որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-3-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերով սահմանված չափորոշիչների հիմքով, այդ հողամասը ուղղակի կարգով տվյալ հողամասի կադաստրային գնի չափով՝ 1 (մեկ) քառակուսի մետրը՝ 792 (յոթ հարյուր իննսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ, 0.000404 հեկտար հողամասի համար 3200 /երեք հազար երկու հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել քաղաքացի Արտյոմ Արտակի Դավթյանին (նույնականացման քարտ 006286371, տրված՝ 21.10.2017թ, 022-ի կողմից, բնակության հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Ձերժինսկի փողոց, շենք 20, բն. 17)՝ խանութի արտաքին պատուհանը արդիականացնելու, աստիճանահարթակ և թեքահարթակ կառուցելու նպատակով:

3. Նշել, որ

1) օտարվող հողամասը չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

2) հողամասի օտարումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

3) օտարվող հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Արման Սարիբեկյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

<u>Օրակարգ-5:</u>

5) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԻԹՀԱՆՔՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-072-0009-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.39985 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ Անիի համայնքապետարան է դիմել քաղաքացի՝ Անի համայնքի Ձիթհանքով բնակավայրում բնակչության սպասարկման և հանգստի գոտի կառուցապատելու նպատակով հողամաս տրամադրելու խնդրանով:

Առաջարկությունն ունի բարեգործական նպատակ և մենք մեր պատրաստակամությունն ենք հայտնել ըստ ամենայնի աջակցելու ներդրողին:

Որոշման ընդունումը կարգավորվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի, 68-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով:

Նախատեսվում է հողամասը օտարել բաց աճուրդով, հրապարակային սակարկությունների միջոցով: Մեկնարգին գին է հաստատվել տվյալ հողի կադաստրային արժեքի 100 տոկոսը:

Առաջարկություն ստացվեց ընդունել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԻԹՀԱՆՔՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-072-0009-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.39985 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի, 68-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Ձիթհանքով բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-072-0009-0005 կադաստրային ծածկագրով 0.39985 հեկտար հողամասն (հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Ձիթհանքով, 1-ին փողոց, 3-րդ նրբանցք, թիվ 2/2 հողամաս) օտարել աճուրդով՝ այդ հողամասում բնակչության սպասարկման և հանգստի կազմակերպման օբյեկտ կառուցապատելու համար:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով նախատեսված աճուրդով օտարվող հողամասի մեկնարկային գինն ու աճուրդի պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ձեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

Օրակարգ-6:

6) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ որոշման ընդունման համար հիմք են հանդիսացել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները: Համայնքի 2023 թվականի 2-րդ եռամսյակի կատարման արդյունքները բաժանված են Ձեզ: Առաջարկում եմ այն ընդունել ի գիտություն և հաստատել որոշումը:

Առաջարկություն ստացվեց ընդունել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համայնքի 2023 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի կատարման արդյունքների մասին, համաձայն՝ N 1, N 2, N 3 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Զեկուցողը համայնքի ավագանուն ներկայացրեց օրակարգի հաջորդ հարցը.

Օրակարգ-7:

7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

/Զեկուցող՝ Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյան/

Զեկուցողը նշեց, որ որոշման ընդունման համար հիմք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշմամբ

հաստատված <<Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգի>> 9-րդ կետը, համաձայն որի համայնքի ղեկավարը կազմում է համայնքի հողային հաշվեկշիռը, այն համաձայնեցնում է համայնքի ավագանու հետ և ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 10-ը ներկայացնում է համապատասխան մարզպետին: Անի համայնքի հողային հաշվեկշիռը, ըստ հողային ֆոնդի նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության, սեփականության սուբյեկտների, սեփականության և օգտագործման ձևերի՝ արտահայտված, հողամասի մակերեսի ճշտությամբ բաժանված են ավագանու անդամներին:

Առաջարկություն ստացվեց ընդունել ավագանու որոշման նախագիծը:

Քվեարկության կողմ՝ 11, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 արդյունքներով ընդունվեց համայնքի ավագանու որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգի>> 9-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

որոշում է

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի կողմից 2023 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի հողային հաշվեկշռին՝ հողային ֆոնդն ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության, սեփականության սուբյեկտների, սեփականության և օգտագործման ձևերի՝ արտահայտված հողամասի մակերեսի ճշտությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Որոշումն ուժիմ մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավարը հայտարարեց, որ Անի համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգի հարցերը սպառված են, նիստը հայտարարվեց փակված:

Համայնքի ավագանու կողմից ընդունված որոշումների հավելվածները կցվում են արձանագրությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ- 11	Դեմ – 0	Ձեռնպահ – 0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------

Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ---------- ---------- ----------

Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ ---------- ---------- ----------

Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ ---------- ---------- ----------

Ա. ՇԱԲՈՅԱՆ ---------- ---------- ----------

Հ. ԶԱՏԻԿՅԱՆ ---------- ---------- ----------

Ժ. ԱԼԵՔՅԱՆ ---------- ---------- ----------

Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ ---------- ---------- ----------

Ն. ՍԱՐՈՅԱՆ ---------- ---------- ----------

Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ ---------- ---------- ----------

Մ. ԵՆՈՔՅԱՆ ---------- ---------- ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

Արձանագրեց՝

ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար՝
Հ. Համբարյան _____

<<12> հուլիսի 2023 թ.
քաղաք Մարալիկ